

ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԼՈՒԾԵ՞Ց ԻՐ ԱՌԱՋԱԴՐԱԾ ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2003 թ. սեպտեմբերի 15-20-ը երևանում տեղի ունեցավ «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» թեմայով միջազգային առաջին համաժողովը, որին մասնակցում էին 25 երկրի շուրջ 90 հայագետներ: Համաժողովի աշխատանքներն ընթանում էին պատմության, բանասիրության, արվեստի և եկեղեցու պատմության մասնաճյուղերում: Այդ միջոցառման խնդիրների ու նպատակների մասին է մեր զրույցը համաժողովի խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի հետ:



-Համաժողովին նախորդած մամուլի ասուլիսում կազմակերպիչները, որոնց թվում և Դուք, այս հավաքի կարևոր նպատակն էիք համարում վերացնել Հայաստանի և սփյուռքի հայագետների միջև վերջին տարիներին առաջացած սառնությունը և մոտեցնել տեսակետները... Սակայն, մինչ հետևանքի մասին խոսելը, չասացիք՝ ի՞նչն է այդ սառնության պատճառը, կամ ո՞ր կարծիքների մերձեցման մասին է խոսքը:

-Համաժողովին սփյուռքից հրավիրել էինք անխտիր բոլորհայագետներին՝ նպատակ ունենալով վերացնել ստեղծված որոշ անջատվածությունը, սառնությունը: Դա նկատվում էր հատկապես ԱՄՆ-ի պատմաբանների հետ հարաբերություններում: Պատճառն Արմեն Այվազյանի «Հայոց պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ» (1998) մենագրությունն էր: Ամփոփիչ նիստում Կլոդ Մուքաֆյանն (Ֆրանսիա) ասաց, որ ամեն մարդ կարող է գիրք գրել և իր տեսակետներն արտահայտել: Սակայն նա զայրացուցիչ համարեց, որ այդ տեսակետներին հայոց պատմության ամբիոնը քաղաքացիություն է տվել՝ դարձնելով ԵՊՀ-ի կարծիք:

-Այդ գիրքը լույս է տեսել ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ:

-Նույն այդ գիտխորհրդում, որին մասնակցել են, առաջարկել են այն քննարկել ԵՊՀ պատմության ֆակուլտետի և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի համատեղ նիստում, որպեսզի միակողմանի բնութագրումներ չլինեն:

Համաժողովի հիմնական նպատակն էր պարզել հայագիտության արդի վիճակը համաշխարհային մասշտաբով ու նրա հետագա խնդիրները և համակարգված աշխատանքներ ծավալել արտերկրի մասնագետների հետ: Մեր հիմնահարցերը շատ-շատ են: Օրինակ՝ հայ ժողովրդի կազմավորման հարցը, հնագետների կարծիքով, պետք է դիտել մերձավորարևելյան քաղաքակրթության ընդհանուր ոլորտում, իսկ պատմաբանները շեշտը դնում են այն հանգամանքի վրա, որ խոր անցյալում Հայկական լեռնաշխարհում եղել են հայկական ցեղեր և պետականություններ: Բազմաթիվ բացթողումներ կան: Խորհրդային շրջանում փաստաթղթերը չեն տպագրվել ամբողջությամբ: Շատ հարցեր դուրս են մնացել ուսումնասիրությունից և այլն: Ահավոր բարձիթողի վիճակում է եկեղեցու պատմությունը...

-Համաժողովը կարողացավ լուծել իր հիմնական խնդիրները:

-Հիմնականում՝ այո: Իհարկե, եղան նաև թերություններ:

Խնդիր էր դրված պարզել մեր և նրանց տեսակետները: Նախ՝ մի շարք հարցերի շուրջ տարակարծություններ կան ոչ միայն սփյուռքի մասնագետների հետ, այլև՝ տեղի: Եվ դա բնական է. գիտությունն առանց տարբեր տեսակետների բախման ու տարակարծությունների չի կարող զարգանալ: Մեր մեջ ուղղակի փոխադարձ տեղեկատվության պակաս կա: Հիմնական թերությունն այն է, որ Հայաստանում սփյուռքի որոշ հայագետների նայում են որպես սիրողական բնույթի ուսումնասիրություններ կատարողների: Դա և ճիշտ է, և ոչ: Այդպիսիք իրոքկան: Բայց կան նաև պրոֆեսիոնալներ: Նրանք էլ, իրենց հերթին, Հայաստանի մասնագետներին հանդիմանում են, որ 70 տարվա ընթացքում մարքսիստական գաղափարախոսությամբ խեղաթյուրել են պատմությունը: Սա այնքան էլ ճիշտ չէ, որովհետև նույն այդ շրջանում հայագիտության բնագավառում հսկայական գործ է կատարվել:

-Ամեն ինչից երևում էր, որ համաժողովի կազմակերպիչներն ընտրել են չհակադրվելու, չբանավիճելու ուղին: Ըստ իս՝չ կայացավ ակնկալված քննարկումը հայագիտության այսօրվա ամենացավոտ հարցի՝ հայոց պատմության նենգափոխման շուրջ (ծրագրում մնան զեկուցումներ չկային) և յուրա բանջյուրը, ըստ էության, մնաց իր տեսակետին...

-Կրկնում են՝ մեր հիմնական խնդիրն էր ավելի պարզել հայագիտության արդի վիճակը և խնդիրները: Այո, առանձին շատ հարցերի շուրջ զեկուցումներ չկային: Նենգափոխության մասին շատ է խոսվել հումանիտար գիտությունների բաժանմունքում Համաժողովում էլ ասվեց, որպեսզի միջազգային գիտական հանրությունը ամբողջական տեղեկություններ ունենա Հայաստանի մասին, պետք է օտար լեզուներով հանրամատչելի գրականություն հրատարակել հայոց

պատմության, հայ գրականության և արվեստի վերաբերյալ: Նենգափոխությունների և կեղծարարությունների դեմ պայքարի մյուս ձևն էլ հողվածների հրապարակումն է: Խնդիր դրվեց այս գործը կազմակերպել սփյուռքի մասնագետների հետ համատեղ:

-Ազգային ինքնության հարցերին վերաբերող «կլոր սեղանի» ժամանակ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանն ահազանգեց՝ Եվրոխորհրդի պահանջով նախատեսվում է մինչև 2008թ. պատրաստել մի շարք դասագրքեր, որոնցում հայոց պատմությունը, գրականությունը և այլն պետք է դիտվեն համաշխարհային գրականության ծիրում: Մի՞թե վերանալու են ազգային դասագրքերը՝ ինչպես կաթիլը՝ ծովում:

-Այդ հարցը եղել և անցել է: Բոլորս դրան դեմ ենք արտահայտվել: Դա գիտական մոտեցում չէ և չի կարող իրականացվել:

-Իսկ եթե ապագայում կրկի՞ն կանգնենք կատարված փաստի առաջ...

-Հնարավոր չէ նման ձևով պատմություն գրել: Ենթադրենք՝ այսինչ դարում մենք ունեցել ենք այսպիսի մշակույթ, իսկ մեր հարևանները՝ ոչ: Հնարավոր է մեզ և նրանց դնել նույն մակարդակի վրա: Դա կնշանակի կեղծել պատմությունը:

-Ես հետևել եմ պատմության մասնաճյուղի աշխատանքներին: Ցավոք, ծրագրված զեկուցումների շատ չնչին մասն էր վերաբերվում հայագիտության արդի վիճակին կամ ուրվագծում զարգացման հեռանկարներ: Սակայն ելույթի իրավունքից զրկվեց Արմեն Այվազյանը, պատմաբան, որի՝ Չեր արդեն հիշատակած աշխատությունը հատկապես ուղղված է պատմության նենգափոխումների դեմ: Եթե այն գիտական որևէ արժեք չի ներկայացնում, ինչո՞ւ Հայաստանում այս տարիների ընթացքում ոչ մի լուրջ գրախոսական չգրվեց, գոնե մի քանի տողով չտրվեց այդ աշխատության գնահատականը: Իսկ համաժողովից ավելի հարմար ի՞նչ առիթ պիտի լիներ՝ այդ «նացիոնալիստ» հեղինակին հրապարակավ «ի ցույց» դնելու համար: Դուք՝ կազմակերպիչներդ, այդ կերպ էլ՝ ավելի բարձրացրիք նրա վարկը և՛ Հայաստանում, և՛ սփյուռքում: Բոյկոտի այդ ձևը նրա համար դարձավ մինչ այժմ չգերազանցված գով ազդային ռեկորդ...

-Ոչ ոք նրան ձայնից չի զրկել: Նա ներկայացրել էր զեկուցում՝ ամերիկահայ պատմաբանների մասին, իսկ այդ հարցը մեզ մոտ վիճահարույց է: Իսկ քանի որ մեր նպատակը սփյուռքի հետ համագործակցություն ստեղծելն է, և՛ այդ, և՛ ուղղագրության հարցը որոշեցինք քննարկման նյութ չդարձնել՝ դրանք էլ ավելի չսրելու և կրքեր չբորբոքելու նպատակով, մանավանդ, որ նման ընդգրկում համաժողովում հնարավոր չէր դրանք լուծել: Մենք Այվազյանին ասել ենք, որ այդ թեմաներով կիրավիրվեն նեղ մասնագիտական քննարկումներ: Նրան առաջարկել ենք այլ զեկուցում: Հրաժարվել է: Այվազյանի մասին իմ կարծիքը դրական է: Նա շնորհալի երիտասարդ է, բայց նրա

մոտեցումը հարցերին միակողմանի է: Իսկ նրա գրքի մասին ժամանակին Կարեն Յուզբաշյանը գրել է:

-Ներեցեք, դա հայիոյախառն մի զագրախոսություն էր, որ իրեն հարգող մարդը, այն էլ՝ գիտնականը, նման «արտադրանք» չէր թողարկի...

Սեպտեմբերի 15-20-ը Երևանում տեղի ունեցավ «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները»

թեմայով միջազգային առաջին համաժողովը, որին մասնակցում էին 25 երկրի շուրջ 90 հայագետներ: Համաժողովի աշխատանքներն ընթանում էին պատմության, բանասիրության, արվեստի և եկեղեցու պատմության մասնաճյուղերում: Այդ միջոցառման խնդիրների ու նպատակների մասին է մեր գրույցը համաժողովի խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի հետ: «Վասն հայության» 6 թիվ 25 (88), 24.10.2003

-Համաձայնեմ, սակայն դրա հետ մեկտեղ տեղին քննադատել էր Այվազյանի սխալ մեթոդը: Նկատի պետք է ունենալ, որ նրա գրքում կան ծայրահեղություններ՝ Թոմսոնի և մյուսների մասին: Նրանց ընդհանուր աշխատանքը չի գնահատում, այլ վերցնում է առանձին արտահայտություններ: Մեր անվանի պատմաբան Մանանդյանն էլ է հորենացում համարում 9-րդ դարի պատմիչ:

-Բայց հետագայում ճշգրտվեց, չէ՞, Պատմահոր տեղը և ժամանակաշրջանը:

-Ճշտեմ, թե չճշտեմ, դա նրա կարծիքն է: Կարելի է ասել՝ դա սխալ է, և ոչ թե Թոմսոնին միակողմանի քարկոծել: Այն հանգամանքը, որ նա հայ պատմիչների գործերը թարգմանել է անգլերեն, հրատարակել, և ամբողջ աշխարհը ծանոթացել է դրանց, Այվազյանը մոռացության է մատնում, խոսք չի ասում:

-Տարիներ առաջ այս թեմայով մենք էլի խոսել ենք: Խորենացու «Հայոց պատմության» հրաշալի թարգմանությանը նախորդել է այնպիսի առաջաբան, որ, մեղմ ասած, ապագիտական է...

-Այո, հաջող չէ: Բայց պետք էր նաև դրականն ասել: Այվազյանի ուսումնասիրության մեթոդը շատերը չեն բաժանում: Մասնաճյուղի ամփոփիչ նիստում, որին մասնակցում էին և՛ Հրաչիկ Սիմոնյանը, և՛ Ռիչարդ Հովհաննիսյանը, ասացինք, որ այդ հարցերն առանձին կքննարկվեն: Ժամանակին ասվել էր, որ բաժանմունքում հրավիրվեն ԳԱԱ և ԵՊՀ պատմաբանները, հեղինակը, ամերիկացի 1-2 հայագետներ, և գիրքը քննարկվի մասնագիտական շրջանում: Դժբախտաբար, դա չարվեց: Կարծում եմ՝ առաջիկայում նման քննարկում կլինի:

-Համաժողովի եզրափակիչ լիագումար նիստում ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն ասաց, որ հրավիրվել են բոլոր հայագետները՝ բացի մեկից: Լավ չհասկացվեց՝ «այդ մեկը» արտասահմանցի՞ էր, թե՞...

-Նա նկատի ուներ Ռոնալդ Սյունուն:

-«Վեն» ռադիոկայանին տված հարցազրույցում Աշոտ Մելքոնյանն ասաց, որ նրան հրավիրել են...

-Այո, հրավիրվել են անխտիր բոլոր մասնագետները: Մինչ համաժողովը իմացել էի, որ համալսարանի կողմից որոշ պատմաբաններ հրավիրված չեն: Համաձայնության ենք եկել ու հրավիրել և՛ ներսի, և՛ դրսի բոլոր մասնագետներին: ԱՄՆ-ի նշանավոր պատմաբաններից չեկան ոչ միայն Սյունին, այլև Գարսոյանը, Ռասելը և ուրիշներ: Չեկան նաև Մերձավոր Արևելքի երկրներից: Նշանակում է՝ ինչ-որ դժգոհություն կա: Լավ կազմով մերկայացան Ֆրանսիայի և Իտալիայի մասնագետները:

-Հայոց պատմության՝ հատկապես որոշ ամերիկացի պատմաբանների նենգափոխումների դեմ Հայաստանի մամուլի հրապարակումները, առանց բացառության, պիտակավորվել են և՛ մեզ մոտ, և՛ դրսում: Դրանք համարել են «դեղին» մամուլի գործ (իրականում մամուլն է դեղին, թե՞ դեղին գիտնականներ կան և՛ այստեղ, և՛ սփյուռքում, կասի ամենազոր ժամանակը), դիլետանտություն, անզլերենի տկար իմացություն և այլն: Այսօր ուզում են մեր ընթերցողներին հերթական «անհրազեկությունը» մատուցել: Ռ. Հովհաննիսյանի ելույթի գրավոր տեքստում (հայերեն) ԱՄՆ-ի և Եվրոպայի հայագետների շարքում բացակայում են համապատասխանաբար Վահագն Տատրյանի (1) և Արտեմ Օհանջանյանի (2) անունները: Հավանաբար նրանք շա՞տ քիչ բան են արել՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Գուցե այս անգամ էլ «մեղադրվեն» հայերենի «տկար» իմացության մեջ...

-Իմ զեկուցման մեջ ես էլ, Հայաստանի պատմագրության մասին խոսելիս, շատերի անուններ չեմ տվել: Դա հնարավոր չէր անել: Դրանից բացի, գիտաժողովի խնդիրը չէր լուսաբանել այս կամ այն պատմաբանի ծառայությունը: Դա կշեղեր մեզ մեր հիմնական նպատակից՝ բացահայտելու ստեղծված իրադրության պատճառները և գտնելու այն ուղիները, որոնցով արդյունավետ կարող է զարգանալ հայագիտությունը:

-Ներեցեք, Ռ. Հովհաննիսյանի զեկուցումը հաշվետվություն էր, տեղեկատվություն, որտեղ անգամ շատ փոքր տրամաչափի հայագետների, անգամ ոչ հայագետների անուններ կային (քավ լիցի, ոչ մեկին վիրավորել չեմ ուզում), ովքեր թեկուզ փոքր լուծա ներդրել են հայագիտության մեջ...

-Նա ներկայացնում էր արտերկրի հայագիտական օջախները, և հնարավոր չէր բոլորին անուն առ անուն հիշել...

-Վահագն Տատրյանը միակ հայ ցեղասպանագետն է, հնարավոր չէ նրան շփոթել... Արտեմ Օհանջանյանը չի էլ հրավիրվել...

-Դրա մեջ ոչ մի միտում չեմ տեսնում: Տատրյանին հրավիրել ենք. ցավոք, հիվանդության պատճառով չի եկել: Ե՛վ Հայաստանում, և՛ սփյուռքում նրան ընդունում ենք որպես Հայոց ցեղասպանության հարցը բարձրացնող և գիտականորեն ուսումնասիրող ամենախոշոր մասնագետներից՝ առաջիններից մեկը:

-Նախկինում առիթ է եղել Ձեզ հետ խոսելու երջանկահիշատակ Լենդրուշ Խուրշուդյանի անավարտ մնացած երազանքի՝ երևանում հայագիտական միջազգային կենտրոն ստեղծելու մասին: Նման որոշում կայացրել է նաև ԵՊՀ հայոց պատմության ամբիոնը՝ 2001թ. դեկտեմբերի 19-ին: Այն անարձագանք մնաց: Հայր Մեսրոպ վարդապետ Թովալյանը (Լիբանան) և նման առաջարկություն արեց համաժողովում, որը նիստի նախագահ Կարեն Յուզբաշյանը (Սանկտ Պետերբուրգ) սվիններով ընդունեց: Ժամանակին Արմեն Այվազյանն իր գրքում կարևորել էր հայագիտության գիտական վերահիշակողության հարցը: Ի՞նչն էր պատճառը, որ իմ հիշատակած բոլոր դեպքերում դրանք անտեսվեցին, սակայն համաժողովի ընդունած փաստաթղթում, որի նախագիծը ներկայացրիք եզրափակիչ նիստում, այդ կետը կար: Հավանաբար, այստեղ «կարևոր» էր, թե ո՞վ է ասում...

-Ժամանակին Լենդրուշ Խուրշուդյանի հետ շատ ենք խոսել այդ մասին: Անկախությունից հետո այդ հարցը հարյուրավոր անգամներ դրվել է ԳԱԱ-ում: Նույնիսկ վեճեր են եղել՝ հունանիտար բաժանմունքը դարձնել կենտրոն, թե՞ ստեղծել կենտրոն: Կարևոր չէ՝ ով է առաջինն ասել: Պարզապես, ելնելով այդ պահանջներից և այսօր ստեղծված իրավիճակից, հարցը բարձրացրինք համաժողովի անունից: Դա հասունացած և հանրահայտ հարց էր:

-Իսկ ինչո՞ւ հայոց պատմության ամբիոնի որոշումն անարձագանք մնաց:
 -Մենք չսրեցինք այդ վերաբերմունքը ամերիկյան պատմագրության հարցում: Այդ որոշումը չէր արտահայտում համալսարանի կարծիքը և առանց ֆակուլտետի գիտական խորհրդում քննարկելու հարկ չկար հրապարակել: Համաժողովի նպատակն էր արտերկրի հայագետների հետ ներդաշնակված աշխատանքներ ծավալել, վերանայել եղած թյուրիմացությունները: Վերջին՝ ամփոփիչ նիստում Հրաչիկ Սիմոնյանը և Ռիչարդ Հովհաննիսյանն ասացին, որ դա հետևանք է այն բանի, որ, կրկնում են, ամբողջական տեղեկատվություն չկա: Որոշեցինք ստեղծել պարբերական, որը լիարժեք տեղեկություն կտա և՛ արտերկրի, և՛ Հայաստանի հայագիտության մասին: Անհրաժեշտության դեպքում դրանք լույս կտեսնեն հայերեն և անգլերեն, որպեսզի այսուհետ թյուրիմացություններ չլինեն: Ամբիոնի որոշումն այդքան մեծ կարևորություն ունեցող բան չէ: ՀՀ ԳԱԱ ինստիտուտները ևս բազմաթիվ որոշումներ ունեն:

-Բայց ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի որոշումն արտառոց երևույթ էր...

-Համալսարանի ամբիոնն այնքան մեծ կշիռ չունի հայագիտության մեջ, որքան ԳԱԱ ինստիտուտները, որտեղ այդ ամբիոնի նման բազմաթիվ բաժիններ կան: Մեր նպատակը չէր շեշտել՝ ով ինչ հարց է բարձրացրել: Մեր նպատակն այն է, թիվ 25 (88), 24.10.2003 7 «Վասն հայության» որտեղ էլ հարցը հասունանա, ընթացք տալ:

-Եթե ես ճիշտ հասկացա, Դուք ամբիոնի որոշմանը դեմ չեք:

-Բացարձակապես: Ընդհակառակն, ողջունում եմ միջազգային կենտրոն ստեղծելու առաջարկը, որը վաղուց արժարժվում է: Ամփոփիչ նիստում ասացի, որ շատ հարցեր սխալ մեկնաբանություններ են ստացել այն պատճառով, որ համագործակցված չենք աշխատել: Որևէ համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարց քննարկելու նպատակով երբևէ պատմության ֆակուլտետը և ինստիտուտը համատեղ նիստչեն հրավիրել, համատեղ քննարկումներ չեն եղել:

-Ինչո՞վ եք բացատրում այդ կրավորական վերաբերմունքը:

-Խորհրդային շրջանի իներցիայով: Յուրաքանչյուրն իր պլանն ուներ, և շարունակում են այդպես ընթանալ: Անկախության տված ազատությունը դեռևս հունի մեջ չի մտել: Նման քայլ նոր է արվելու: Օրինակ՝ պատմության ինստիտուտն ստեղծելու է հայոց պատմության քառահատոր՝ պատմագիտական բոլոր շրջանակների մասնակցությամբ: Մինչ ժողովածուի հրապարակումը առանձին վիճելի հարցեր՝ հայ ժողովրդի ծագումը, ազգային-ազատագրական շարժումները, Եղեռնը, ազգային կուսակցությունների գործունեությունը և այլն, պետք է քննարկվեն առանձին:

-Հայագիտական միջազգային կենտրոնի ստեղծման մասին կետը, որն ընդգրկված էր համաժողովի ընդունած փաստաթղթի նախագծում, ներկաներից ոմանց համար անընդունելի էր, և նրանք չթաքցրին իրենց անհամաձայնությունը, դժգոհությունը:

-Վերջին մեկ ամսվա ընթացքում այդ նախագծի շուրջ երկար ենք մտածել: Լևոն Ջեքիյանը հարցրեց. «Ի՞նչ կարիք կա կենտրոնը կապել պետության հետ»: Ռիչարդ Յովհաննիսյանն էլ ուներ նման մտահոգություն: Այսինքն՝ մտավախությունում են հատկապես արտերկրի մասնագետները: Նրանք վախենում են խորհրդային ժամանակվա ուրվականից՝ վերադաս ատյաններից ուղղակի գաղափարական ճնշման ենթարկվելուց: Մեր նախանշած կենտրոնը համակարգելու է տեղեկատվական և ստեղծագործական աշխատանքը և՛ Հայաստանում, և՛ արտասահմանում: Վիճելի հարցերի դեպքում պետք է ներկայացնենք ընդհանուր հավանության արժանացած տեսակետները:

-Այդ կենտրոնը գիտական վերահսկողության գործառնություն ունենալո՞ւ է, թե՞ ոչ:

-Նման ոչ մի վերահսկողություն չի ունենալու:

-Նկատի ունեն հայոց պատմության նենգափոխման և պատմաշինարարության դեմ պայքարը:

-Դա անպայման կլինի: Հիշատակածս հանրամատչելի գրականությունը, որը ծրագրում ենք հրատարակել, այդ նպատակին է ծառայելու:

-Իսկ ե՞րբ կհրապարակվի համաժողովի ընդունած փաստաթուղթը:

-Շուտով: Այն դեռ խմբագրվում է. կան առաջարկներ, դիտողություններ և այլն:

-Ի՞նչ նորություններ կան առաջընթաց արձանագրեց համաժողովը հայագիտության բնագավառում:

-Գիտակազմակերպչական աշխատանքների մասին արդեն ասացի: Առանձին հարցերի գծով, օրինակ՝ աղբյուրագիտության, որոշվեց վերանայել խորհրդային շրջանում հրատարակված աղբյուրները և հրապարակել դրանց ամբողջական բնագրերը, ինչպես նաև շրջանառության մեջ դնել նոր փաստաթղթերն ու նյութերը: Պետք է ընդարձակվեն աղբյուրների ձեռքբերման հնարավորությունները: Ստահոգիչ է կադրերի հարցը: Հարց բարձրացվեց ՀՀ կառավարության առաջ՝ օժանդակել կադրերի պատրաստմանը (ավելացնել հայագիտությանը տրվող ասպիրանտական տեղերի քանակը, արտասահման գործուղումները և այլն), բուհերի հումանիտար ֆակուլտետներում մտցնել մեռած լեզուների ուսուցում, դպրոցներում՝ գրաբար, պայքարել սփյուռքում հայկական դպրոցների փակման դեմ, հանրապետության ծայրագավառներում դրպրոցներն ապահովել մանկավարժներով, հատկապես Ռուսաստանի տարածքի հայկական դպրոցների համար պատրաստել դասագրքեր, մանկավարժներ և այլն: Լուրջ ծրագրեր ունենք հրատարակչական գործում: Պատմության քառահատորից զատ, նախատեսվում են ընդհանրացնող այլ աշխատություններ՝ 3 հատորով հայ գրականություն, 6-ով՝ ճարտարապետություն: Շարունակվելու են մատենաշարերը՝ «Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին», «Հայ բանահյուսություն և ազգագրություն», «Հայ վիմագրություն» և այլն: -Ինչպե՞ս եք լուծելու ֆինանսական խնդիրը: ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը այսօր ողբերգական վիճակում է... -Իրոք, կացությունը ծանր է: Մեր ընդունած կետերից՝ առաջիններից մեկն այն է, որ Հայաստանի ազատ, անկախ կառավարությունը հայագիտության զարգացումը դարձնի իր առաջնահերթ խնդիրներից մեկը: Հայագիտությունը պահպանում է ժողովրդի ինքնությունը, լեզուն, պատմությունը, մշակույթը, հավատը և նոր սերունդ դաստիարակում: Հույս ունենք, որ պետությունը պետք է նպաստի գիտության այս ուղղության զարգացմանը: Որոշ ակնկալիքներ էլ մեր բարերարներից ունենք: Եթե նյութական, ֆինանսական օժանդակություն չլինի, դժվար կլինի իրագործել մեր ծրագրերը: -Իշխանության վերին էշելոնում առավել ակնածանքով վերաբերվում են մեծահարուստներին, բիզնեսմեններին, գործարարներին: Հայագիտական միջազգային համաժողովը իրոք կարող էր նախանձել նույնիսկ ցանկացած «Բազեի» կամ այլ պատանեկան հավաք-միջոցառման... -Լիովին համաձայն եմ: Մեր պետական բարձրաստիճան ատյաններում հայագիտության նկատմամբ հետաքրքրությունը թույլ է... -Ինչպե՞ս եք գնահատում համաժողովի աշխատանքը: -Համաժողովն այնպիսի ծավալով էր ընթանում, որ անհնար էր առանց թերությունների: Արտերկրի հյուրերը շատ էին, և անհարմար էր նրանց

Ելույթները ծրագրում չընդգրկելը: Համաձայն չեն Ձեզ հետ, թե զեկուցումների չնչին մասն էր վերաբերվում հայագիտության արդի վիճակին և խնդիրներին: Ցավոք, կային նաև թույլ զեկուցումներ: Գուցե ավելի ճիշտ կլիներավելի փոքր թվով մարդ հրավիրել՝ առավել նշանավոր մասնագետներին: Կային զեկուցումներ, որ կրկնություն էին: Առաջիկայում պետք է որոշենք, թե դրանց որ մասն է արժանի տպագրության: Ընդհանուր առմամբ՝ որպես առաջին, շատ ծավալուն համաժողով, այն հասավ իր նպատակին, և արձագանքներ էլ կան, որ նստաշրջանը հաջող ստացվեց:

ՀԱՍՄԻԿ ԳՈՒԼԱԿՅԱՆ

Հ.Գ. - Հարցազրույցը տպագրության հանձնելուց առաջ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանին հարցրինք՝ հիշյալ նիստի ժամանակ իրո՞ք նույնական էին իր և Ռ. Հովհաննիսյանի տեսակետները՝ տեղեկատվության պակասի մասին: Պատմաբանը կտրականապես մերժելով՝ ասաց. «Ես նման արտահայտություն չեմ արել: Դա արհեստածին թեզ է, որն առաջ է քաշվում՝ մեղմելու տխուր վիճակը ամերիկահայ հայագիտության մեջ»:

Հրաչիկ Սիմոնյանի տեսակետները հայագիտության արդի վիճակի և հրատապ հարցերի շուրջ կիրապարակենք մեր թերթի առաջիկա համարներից մեկում:

Խմբագրությունն ակնկալում է նաև Արմեն Այվազյանի պատասխանը:

Ծանոթագրություն

1. Վահագն Տատրյան, Ցեղասպանությունը որպես ազգային և միջազգային իրավունքի խնդիր... (անգլերեն), 1988թ., (թարգմանվել է նաև թուրքերեն): Հայկական ցեղասպանության պատմությունը (անգլերեն, ֆրանսերեն, հունարեն, ռուսերեն) և այլն, տասնյակ այլ ուսումնասիրություններ:

2. Արտեն Օհանջանյան, Ավստրիա - Հայաստան. 1872-1936թթ., (փաստաթղթերի հավաքածու ավստրիական աղբյուրներից (գերմաներեն), 12 հատորով, Վիեննա, 1995թ.:

1915 թվական. անհերքելի վկայություններ, գերմաներեն՝ 1989թ., Վիեննա, հայերեն՝ 1997թ., Երևան, պարսկերեն՝ 1999թ., Թեհրան: Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի դերը Հայկական հարցում, (գերմաներեն), Վիեննա, 2001թ.: Շուրջ 10 հեռուստաֆիլմ՝ Ինչու գրեց Ֆրանց Վերֆելը Մուսա լեռան 40 օրը, Ֆրանց Վերֆելը և Ցեղասպանությունը, 24-ը ապրիլի և այլն:

Survivors of The Armenian Genocide

**EDWARD
RACOUBIAN**

We walked for many days, occasionally running across small lakes and rivers. After awhile we saw corpses on the shores of these lakes. Then we began seeing them along the path: twisted corpses, blackened by the sun and bloated. Their stench was horrible. Vultures circled the skies above us, waiting for their evening meal. At one point, we came upon a small hole in the ground. It was a little deeper than average height and 25-30 people could easily fit in it. We lowered ourselves down into it. There was no water in it but the bottom was muddy. We began sucking on the mud. Some of the women made teats with their shirts filled with mud and suckled on them like children. We were there for about a half hour. If we hadn't been forced out, that would have been our best grave. Many days later we reached the Euphrates River and despite the hundreds of bodies floating in it, we drank from it like there was no tomorrow. We quenched our thirst for the first time since our departure. They put us on small boats and we crossed to the other side. From there we walked all the way to Ras-ul-Ain. Of a caravan of nearly 10,000 people, there were now only some of us 300 left. My aunt, my sisters, my brothers had all died or disappeared. Only my mother and I were left. We decided to hide and take refuge with some Arab nomads. My mother died there under their tents. They did not treat me well—they kept me hungry and beat me often and they branded me as their own.

